Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասապրոցեսում՝որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց

Ուսուցիչ՝ Հասմիկ Ղազարյան

Դպրոց՝Զեդեայի հիմնական դպրոց

2023թ

Ներածություն

Նորագույն տեխնոլոգիաները մարդկային կյանքի, ողջ հասարակության համար ստեղծել են նոր աշխարհ:Դրանք, հակառակ մեր ակնկալիքներին չեզոք միջոցներ չեն: Դրանք են թելադրում կյանքի ընթացքն ու ուղորդում ճանապարհը: Ներկա դարաշրջանում, մարդ արարածը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը: Քաղաքական, տնտեսական, գեղագիտական, հոգեբանական, բարոյական, կրթական, հասարակական տեսանկյունից տեղեկատվական տեխնոլոգիաների թողած ազդեցության հետևանքները խոր են այնքանով, որ մարդկային կյանքի և հոգու ոչ մի անկյունը զերծ չի մնացել այդ ազդեցությունից: Այսօր ակնհայտ է, որ քաղաքակրթության հետագա զարգացումը կախված է նրանից, թե ինչպես կկառուցվեն մեդիայի և մարդու, մեդիայի և մշակույթի, մեդիայի և կրթության հարաբերությունները: Միայն համատեղ ջանքերի շնորհիվ է հնարավոր լուծել այդ խնդիրները: Առ այսօր մանկավարժական ասպարեզում չկա մեդիայի կիրառելիության համակարգվածություն, ուսումնասիրված չէ՝ ինչ դեր են խաղում էլեկտրոնային միջոցները կրթության և դաստիարակության խնդրում: Հիմնական բարդությունն այն է, որ մանկավարժական արդեն կատարված ուսումնասիրությունները կորցնում են արդիականությունը՝ մեդիամիջոցների արագ փոփոխման հետևանքով: Աշխատանքային եւ սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ եւ հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման: Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության եւ հաղորդակցության արդի միջոցների զարգացման եւ տարածման հետ:

Աշխարհում տեղի ունեցող գործընթացներն անշեղորեն տանում են տեղեկատվական հասարակության ձևավորմանը, որի առանձնահատկություններից են՝ տեղեկատվության, գիտելիքների, տեղեկատվական տեխնոլոգիաների դերի բարձրացումը հասարակության կյանքում, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) արտադրանքի ծավալի աճը ընդհանուր արտադրության ծավալի մեջ, ՏՀՏ ոլորտում աշխատողների թվաքանակի ավելացումը, հասարակության տեղեկատվայնացումը: Գլոբալ տեղեկատվական միջավայրի ձևավորումը պահանջում է, որ

-2-

Հասարակության յուրաքանչյուր անդամ, օգտագործելով տեղեկատվական և

հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաներ, հաղորդակցվի հասարակության անդամների հետ, բավարարի իր տեղեկատվական պահանջները, մուտք գործի համաշխարհային տեղեկատվական շտեմարաններ:

Զարգացման այս միտումները՝ տեղեկատվության ստացման, մշակման, պահպանման և փոխանցման առումով, բարձր պահանջներ են ներկայացնում հասարակության բոլոր անդամների, առավել ևս՝ աշխատանքային շուկայում մասնագետների գիտելիքների և հմտությունների մակարդակին: Այսօր տեղեկատվության հետ աշխատանքը չի կարելի պատկերացնել առանց համակարգիչների, թվային այլ տեխնոլոգիաների և ժամանակակից կապուղիների: Դրանք, լինելով մարդու մտքի թռիչքի արդյունքը, մնում են սոսկ սարքեր, որ ազատում են մարդուն մեծածավալ մեխանիկական աշխատանք կատարելուց: Տեղեկատվության հետ արդյունավետ աշխատանքի կարևորագույն երաշխիքներն են՝ հասարակության անդամի տեղեկատվական մշակույթը (կուլտուրան), վերլուծական և լեզվատրամաբանական հմտությունները:

Հասարակության լիարժեք և ակտիվ անդամ, աշխատաշուկայում մրցունակ մասնագետ «աճեցնելու» համար անհրաժեշտ է ներկայացվող բարձր պահանջներին համապատասխանող կրթական համակարգ, որի պարտադիր պայման է ՏՀՏ-ի ներդրումը կրթության մեջ, ինչպես նաև ՏՀՏ ոլորտի առարկաների միջանցիկ և անընդհատ դասավանդումը կրթության բոլոր աստիճաններում՝ սկսած տարրականից: Դա թույլ է տալիս ապահովել՝

- ուսումնական նյութի մեծ ծավալի ուսումնասիրությունը,
- ձևավորել նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և սարքերի հետ աշխատանքի հմտություններ,
- սովորողների մոտ ձևավորել արժեքային համակարգ՝ հիմնված ազգային և համաշխարհային արժեքների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որդեգրած կրթության քաղաքականության համատեքստում մեծ դեր ունի ՏՀՏ ներդրումը հանրակրթության մեջ:

Տեխնոլոգիաներին տիրապետելու հմտություններն ու գիտելիքներն ուսումնառության ընթացքում կբարձրացնեն կրթության որակը, կընդլայնեն սովորողների ստեղծագործական աշխատանքի հնարավորությունները, թույլ կտան սովորողներին հաղորդակցվել ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհի իրենց հասակակիցների հետ:

Գլուխ 1. ՏՀՏ –ի կարևոր և արդիական լինելը 21-րդ դարում

Մեզ անբավարար է թվում երեխաների մարմինը և հոգին թողնել այնպիսի իրավիճակում , ինչպես դրանք տրված են բնության կողմից . մենք հոգում ենք նրանց դաստիարակության և ուսման մասին , որպեսզի լավը դառնա շատ ավելի լավ, իսկ վատը փոխվի և դառնա լավ:

Լուկիանոս

1.1ժամանակակից ՏՏ ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ

Իրապես մեքենայացված և արդիական տեխնոլոգիայով հագեցված կյանքը մեր երեխաներից խլել է նման եզակի պահերը:Տարբեր տեսակի զվարճացնող արդիական տեխնոլոգիաների ներխուժմամբ : ժամանակակից երեխաներն առավելապես գերադասում են իրենց մանկական թանկ պահերը անց կացնել համակարգիչների և թվայնացված տարբեր խաղերով : Նրանք մեծանում են ինտերնետով և ապրում են այնտեղ :

Թեև չի կարելի անտեսել մարդկային կյանքում ու կապերում տեխնոլոգիայի և վիրտուալ աշխարհի օգտակար ազդեզությունը , սակայն չպիտի տարվել դրանցով :Պիտի ունենալ անհրաժեշտ զգոնություն և թույլ չտալ ,որ արդիական տեխնոլոգիաները մեզանից խլեն բարոյական արժեքավոր գանձերը ընտանեկան հարգալից կապերն ու մարդկային եզակի զգացմունքները :

-4-

Գուցե առաջին պահին մեզ զարմանալի թվա ,թե ինչպես երեք կամ չորս տարեկան մի երեխա նման հետաքրքրություն է ցուցաբերում արդիական կապի միջոցների

հանդեպ և չնայած իր փոքր տարիքին կարողանում է օգտվել այդ սարքերից : Սակայն հետզհետե պարզ է դատնում այն իրականությունը , որ արդիական տեխնոլոգիաներն այսօր համարվում են երեխաների ամենասիրած ապրանքները:

Թվայնացված խաղերի կապակցությամբ կատարված որոշ ուսումնասիրությունների արդյունքները պարզում են ,որ այդ խաղերը ուսուցման և սովորելու լավ աղբյուր են հանդիսանում :Ուսուցողական մի խումբ խաղեր դրական ազդեցություն են գործում կրթական ոլորտում: Հետևաբար խաղը կարևոր ազդակներից մեկն է, որը նկատի պիտի առնվի երեխայի դաստիարակության ժամանակ : Խաղը կառուցման նորարարության ,փորձառության ինչպես նաև երեխայի ընդունակությունները ,կարողությունները , ցանկությունները և թույլ և ուժեղ կետերը ճանաչելու միջոց է:

Խաղային տեխնոլոգիաները հանդիսանում են մանկավարժական տեխնոլոգիայի բաղկացուցիչ մաս: Խաղը սոցիալական փորձի վերստեղծմանն ու յուրացմանն ուղղված իրավիճակներում գործունեության տեսակ է, որում զարգանում և բարելավվում է անձի ինքնակառավարումը: Խորհրդային մանկավարժության և հոգեբանության պրակտիկայում խաղային գործունեության խնդրին անդրադարձել են Կ. Դ. Ուշինսկին, Պ. Պ. Բլոնսկին, Ս. Լ. Ռուբինշտեյնը և այլոք, արտասահմանում՝ Զ. Ֆրեյդը, Ժ. Պիաժեն և այլոք: Նրանց աշխատանքներում հետազոտվել և հիմնավորվել է խաղի դերը անհատի զարգացման հարցում, հիմնական հոգեբանական ֆունկցիաների զարգացման հարցում, ինքնակառավարման և ինքնադրսևորման հարցերում[1]:

1.2 Ժամանակակից և ավանդական մանկավարժական տեխնոլոգիաներ

Այսօր կիրառելի են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ՝ ավանդական և նորարական: Մենք չենք կարող հստակ ասել, որ պետք է հրաժարվել ավանդական տեխնոլոգիայից և օգտագործել միայն նորարական տեխնոլոգիաները, քանի որ դասավանդման լիարժեք դեղատոմս գոյություն չունի, և որի դեպքում լիարժեք ու դրական արդյունք կունենանք՝ ոչ ոք չգիտի:

Ժամանակակից կրթության նպատակները փոքր-ինչ փոփոխվել են, փոխվել է բարոյական դաստիարակության բնույթը, սակայն մի շարք ուսումնական չափանիշներ մնացել են նույնը: Սա նշանակում է, որ ավանդական ուսուցման

[1] Выготский Л.С. Игра и ее роль в психическом развитии ребенка.//Вопросы психологии.2000. №6.-60с.

տեխնոլոգիան շարունակվում է կիրառվել կրթական համակարգում և պահպանում է իր գերակայությունը գիտելիքի հաղորդման պարագայում:

Ուսուցման ավանդական տեխնոլոգիան բավականին հին արմատներ ունեցող տեխնոլոգիա է, որն իրականացվում է հետևյալ կառուցվածքով՝ նոր նյութի ընկալում, ամրապնդում, ղեկավարում, գնահատում:

Ավանդական ուսուցման տեխնոլոգիան դաս-դասարանային համակարգի հիմքն է: Ավանդական ուսուցում տերմինը նշանակում է ուսուցման կազմակերպում, որը 17-րդ դարի սկզբներին ձևակերպել է Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիա» գրքում:

Ավանդական ուսուցման տեխնոլոգիան հիմնված է բացատրական-ցուցադրական մեթոդի վրա: Ավանդական ուսուցման ժամանակ դասը բաժանվում է երկու հատվածի՝ հին նյութի հարցում և նոր նյութի հաղորդում: Այս գործընթացը կրկնվում է ամեն օր և սովորողը մի դասին հասցնում է առնվազն 2-3 անգամ լսել միևնույն նյութը, չհաշված, որ ինքն այդ նյութը լսել է նաև նախորդ դասին, երբ դասավանդողը հաղորդում էր նոր նյութը: Հենց այս ամենն էլ ձանձրույթ է պատճառում ժամանակակից սովորողին, որը ակտիվություն է ուզում: Այս պարագայում անտեսվում են սովորողի մի շարք որակական հատկանիշներ, որոնք նրան կարող են մղել ինքնազարգացման:

ՈՒսումնառության առաջին օրից աշակերտներն, օգտագործելով դասագրքերը, աշխատանքային տետրերը, նկարչական ալբոմները, տեսաերիզները և ձայներիզները, աշխատում են տարբեր տիպի տեղեկատվության հետ՝ սովորում են ստանալ, պահպանել, վերլուծել և հաղորդել տեղեկատվությունը: Սա նշանակում է, որ «Ինֆորմատիկա» առարկայի հիմնական տարրերը առկա են ուսումնառության առաջին իսկ օրից: Սկզբնական այս փուլում շատ կարևոր է

-6-

ընդգծել տեղեկատվության հետ աշխատանքի կանոնները բոլոր առարկաների ուսուցման ընթացքում:

Լինելով ճշգրիտ առարկաներից մեկը՝ «Ինֆորմատիկան» պետք է դասավանդվի այլ առարկաների հետ ինտեգրված: Ինֆորմատիկայի դասավանդումը տարրական

դպրոցում այն նախապատրաստական փուլն է, որը թույլ կտա միջին և ավագ դպրոցում խորությամբ ուսումնասիրել ինֆորմատիկան որպես գիտություն, ձեռք բերել ժամանակակից տեխնոլոգիաների հետ աշխատանքի հմտություններ:

Տարրական դպրոցում ինֆորմատիկայի դասավանդման հիմքում ընկած են այլ առարկաներից ստացված գիտելիքների՝ այբուբենի, թվերի, թվաբանական գործողությունների, հեքիաթների հերոսների, վարվելակերպի կանոնների և այլնի համակարգումը, համակարգչի՝ որպես գործիքի հետ ծանոթանալը: «Ինֆորմ առարկայի դասերին աշակերտները կսովորեն համակարգել, փոխկապակցել իրենց շուրջը տեղի ունեցող գործընթացները, կատարել տրամաբանական հետևություններ, հաղորդակցվել:

Տարրական դասարանի աշակերտները տարբեր աղբյուրներից պատկերացում ունեն համակարգչի մասին, շատերն ունեն դրա օգտագործման սահմանափակ կարողություններ: Ինֆորմատիկայի դասերին աշակերտները կսովորեն ընկալել համակարգիչը որպես գործիք, համակարգված գիտելիքներ կստանան համակարգչի հետ աշխատելու համար, կյուրացնեն համակարգչով աշխատելու օրինաչափություններն ու ինֆորմատիկայի հիմնական օրենքները:

Համակարգչի հետ աշխատանքի հմտությունները լայն հնարավորություններ կստեղծեն հետագա ուսումնառության համար:

2-4-րդ դասարաններում համակարգչային հմտությունների ուսուցումը նաև նպատակ ունի աշակերտների համար ստեղծել օտար լեզուն սովորելու հոգեբանական և դիդակտիկ պայմաններ՝ օգտագործելով համակարգչի լայն հնարավորությունները:

Այսօր ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումն իր տեղն է գտնում առաջին հերթին լավ կազմակերպված դասի ժամանակ Տարրական դպրոցի տեղեկացվածությունը կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

• բարձրացնել սովորելու մոտիացիան

• մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը

-7-

• նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը

• բարելավել դասի անցկացման մեթոդները

• ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները

• պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը

• օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց

• արագ և որակյալ պատրաստվել դասին

Ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցումը դարձնել բացատրական պատկերազարդ, այստեղ երեխան դառնում է ուսումնական գործունեության ակտիվ առարկա: Սա նպաստում է սովորողների կողմից գիտելիքների գիտակցական յուրացմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս ակտիվացնել սովորողների ճանաչողական գործունեությունը, դասերն անցկացնել բարձր գեղագիտական մակարդակով (երաժշտություն, անիմացիա), անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր աշակերտի՝ կիրառելով տարբեր բարդության առաջադրանքներ:

Հակոբյան Լ. Ադամյան Ն. Ժամանակակից տեղեկատական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում «Մանկավարժական միտք» 2016 3-4(62-63) էջ 211-214